Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

## ՔԱՑՈՒԽՍ 1877 ԱՄԻՆ

## ՆԻՍՏ ԺԱ.

2 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1877

ԻՐԱՒՈՒՆՔ ԵՒ ՊԱՐՏՔ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

1877

## ԴԻՒԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

### ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

| | | | |
|---|---|---|---|
| Ստեփան Ասլանեան | փաշա | Ա. | ատենապետ |
| Նուրեան Յովհաննէս | էֆէնտի | Բ. | » |
| Տիգրան Եուսուֆեան | էֆէնտի | Գ. | » |
| Համբարձում Ս. Ալաճաճեան | » | Ա. | ատենադպիր |
| Մկրտիչ Մեհլիեան | » | Բ. | » |
| Տէրոյենց Ադամ | » | Գ. | » |

### ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | | |
|---|---|---|
| Խորէն Արքեպիսկոպոս Նար-պէյ | | ատենապետ |
| Տ. Եղիշէ վարդապետ | | |
| Յարութիւն Մէրճէմ-Գուլի | էֆէնտի | |

### ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | | |
|---|---|---|
| Յովհաննէս Նուրեան | էֆէնտի | ատենապետ |
| Խաչատուր Միսաքեան | » | |
| Գէորգ Ապտուլլահ | » | |

### ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻՒԱՆ

| | | |
|---|---|---|
| Բարսեղ Հալաճեան | էֆէնտի | ատենապետ |
| Յովհաննէս Աղնաւորեան | » | |
| Ստեփան Փափազեան | » | |

### ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | | |
|---|---|---|
| Միքայէլ Մամիկոնեան | էֆէնտի | ատենապետ |
| Մատթէոս Ալիքսանեան | » | |
| Նիկողոս Ալաճաճեան | » | |

### ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | | |
|---|---|---|
| Սենեքերիմ Մանուկեան | էֆէնտի | |
| Ալիքսան Խորասանճեան | » | |
| Ստեփան Պէյլիկճեան | » | |

### ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | | |
|---|---|---|
| Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան | | ատենապետ |
| Ալիքսան Պէշիլեան | էֆէնտի | |
| Քրիստոստուր Ղազարոսեան | » | |

### ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | | |
|---|---|---|
| Գէորգ Սթիմարաճեան | էֆէնտի | ատենապետ |
| Տիգրան Եուսուֆեան | » | |
| Օհան Խօճասարեան | » | |

### ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

| | | |
|---|---|---|
| Կարապետ Իւթիւճեան | էֆէնտի | ատենապետ |
| Պօղոս Պատմասեան | » | |
| Արմէն Ֆէլէկեան | » | |

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

## ԲԱՑՈՒՄ 1877 ԱՄԻՆ

## ՆԻՍՏ ԺԱ.

2 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1877

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. ՄԱՏԹԷՈՍԵՊՍ. (Առժամանակեայ կարգեալ)
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՆՈՒՐԵԱՆ ԷՖԷՆՏԻ (Բ. Ատենապետ)

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

#### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

| | | |
|---|---|---|
| 1 | Խորէն Արքեպիսկ. Նար Պէյ | Բ. |
| 2. | Կարապետ Եպիսկ. Սերոբեան | Բ. Գ |
| 3. | Մատթէոս „ Իզմիրլեան | |
| 4. | Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց | |
| 5. | Գաբրիէլ „ Թաթարեան | |
| 6. | Եղիշէ „ Այվազեան | |
| 7. | Խորէն „ Կիւրեղեանց | |
| 8. | Հմայեակ „ Դիմաքսեան | |
| 9. | Յովհաննէս „ Փափազեան | |
| 10. | Ներսէս „ Աշըգեան | |
| 11. | Պօղոս „ Խօշաքեան | Բ. Գ |
| 12. | Արխիմանդրիտ Բ. Մամբրէեան | |
| 13. | Գէորգ „ Արծրունի | Բ. 2 |
| 14. | Գրիգոր „ Աճէմեան | |
| 15. | Խորէն „ Փէշտիմալճեան | Բ. 2 |
| 16. | Յարութիւն „ Սերովբեան | Բ. |
| 17. | Յովհաննէս „ Միկեան | |
| 18. | Սուքիաս „ Սանտալճեան | |
| 19. | Սահակ „ Տ. Սարգսեան | Բ. |
| 20. | | |

#### ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Գումգափու, Իշխանի փողոց և Գումգափուի դուրս

| | | |
|---|---|---|
| 21. | Գրիգոր Պէրպէրեան | Բ. Գ |
| 22. | Գէորգ Սախսարաճեան | |
| 23. | Յակոբ Մանկասարեան | Բ. Գ |
| 24. | Կարապետ Աղաբաշեան | Բ. 2 |
| 25. | Համբարձում Մալաքիեան | Բ. |
| 26. | Մինաս Գասպարեան | |
| 27. | Յովհաննէս Պալաճեան | Բ. |
| 28. | Ն. Մէզպուրեան Տօքթօր | |
| 29. | Պօղոս Պատմասեան | Բ. |
| 30. | Սարգիս Աղապէկեան | Բ. 2 |
| 31. | Սահակ Ապրօ | Բ. Գ |
| 32. | Սենեքերիմ Մանուկեան | Բ. 2 |
| 33. | Փէշտիմալճեան Տօքթօր | Բ. Գ |
| 34 | Բարթող Քիւրքճեանց | |
| 35. | Յովակիմ Ֆէնէրճեան | |
| 36. | Ադամ Տէրոյենց | Բ. |
| 27. | Գէորգ Ապտուլլահեան | |

(Բ. Վիճակ)

Պէշիկթաշ

| | | |
|---|---|---|
| 38. | Անդրանիկ Կրճիկեան | |
| 39. | Ալիքսան Խորասանճեան | |
| 40. | Բարսեղ Հալաճեան | |

Եէնիգիւղ

| | | |
|---|---|---|
| 41. | Զարեհ Քէրմէն | Բ. |
| 42. | Մկրտիչ Քիւրքճիեան | Բ. |
| 43. | Պօղոս Ժամկոչեան | Բ. |
| 44. | Սեդրակ Մաքսուտեան | Բ. 2 |

Խասգիւղ Ս. Խաչ

| | | |
|---|---|---|
| 45. | Թադէոս Պէկեան | Բ. Գ |
| 46. | Արմէն Ֆէլէկեան | |
| 47. | Գաբրիէլ Գալֆայեան | Բ. 2 |
| 48. | Ստեփան Ասլանեան | Բ. Գ |

Խասգիւղ Ս. Կարապետ

| | | |
|---|---|---|
| 49. | Միհրան Պաղտատլեան | Բ 2 |
| 50. | Պօղոս Թորգոմեան | Բ. 2 |
| 51. | Նիկողոս Ալաճաճեան | Բ. 2 |
| 52. | Տրդատ Փափազեան | |

(Գ. Վիճակ)

Բերա և Գասըմ փաշա

| | | |
|---|---|---|
| 53. | Արփի Ոսկեան | |
| 54. | Գրիգոր Ալլահվերտեան | |
| 35. | Մատթէոս Յ. Տիրեան | Բ. 2 |
| 56. | Միքայէլ Մամիկոնեան | Բ. |
| 57. | Նշան Քաղաքեան | Բ. Գ |
| 58. | Ստեփան Խնջիրեան | Բ. 2 |
| 59. | Տէրեմոյ Մ. Եզեկիէլեան | |
| 60. | Իլիաս Զայեան | |
| 61. | Յարութիւն Նորատունկեան | |
| 62. | Գրիգոր Մարգոսեան | Բ. Գ |

Միջագիւղ

| | | |
|---|---|---|
| 63. | Կարապետ Գ. Պէրպէրեանց | Բ. Գ |
| 64. | Յակոբ Կոստանդեան | Բ. Գ |
| 65. | Յակոբ Գ. Նորատունկեան | |
| 66. | Տիգրան Եուսուֆեան | Բ. |
| 67. | | |

Պէյքոզ և Չաւուշպաշի

| | | |
|---|---|---|
| 68. | Յ. Մէրճէմ—Գուլի | |

(Դ. Վիճակ)

Ղուզկունճուք և Իճատիէ

| | | |
|---|---|---|
| 69. | Յովհաննէս Լեւոնեան | Բ. Գ |
| 70. | Ստեփան Պէյլէրճեան | Բ. 2 |

---

Բ. Բացակայութեան առաջին ։
Բ. 2 Բացակայութեան երկրորդ ։
Բ. Գ Բացակայութեան բանաւոր պատճառ ։

Գատըգիւղ

71. Կարապետ Շահպազեան Բ. 2
72. Մկրտիչ Մուրատեան Բ. 2

Նարլըգափու

73. Յակոբ Էլմէճեան

Ենիմահալլէ Սամաթիոյ

74. Օգսէն Խաչատուրեան

Թօփգափու

75. Յովհաննէս Մարգարեան

Էյուպ Ս. Եղիա և Ս. Աստուածածին

76. Գարեգին Յ. Մելքեան Բ. 2

Գասըմփաշա

77. Ասատուր Քէհեայեան

Հասգիւղ և Պիյալէ գիւղ

78. Յովհաննէս Նուրեան

Նոր գիւղ և Սթէնիա

79. Ղազար Հովուեան Բ.

Պերա

80. Մկրտիչ Գ. Լամեան Բ. 2
81. Յովհաննէս Կրճիկեան
82. Թագւոր Թէրզեան

Քուզկունճուկ

83. Յարութիւն Չիլինկիրեան Բ. Գ
84. Յարութիւն Գ. Տատեան Բ. Գ

(Ե. Վիճակ)

Սամաթիա

85. Ալեքսան Պէշիրեան Բ. 2
86. Աւետիս Քոլոլեան
87. Եղիազար Մելքեան Բ. 10
88. Մինաս Ճամճամեան
89. Յակոբ Փաշալեան Բ. 2
90. Յակոբ Ալամեան
91. Նազարէթ Շահպազեան
92. Յարութիւն Թիւլեան
93. Յակոբ Արշակ
94.

Խասգիւղ

95. Առաքել Ալթուն Տիւրի Բ.
96. Խաչատուր Պ. Միքայէլեան Բ.
97. Ովսէս Պէյլէրեան Բ.
98. Սիմոն Միրզայեան
99. Սարգիս Աբրահամեան
100.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

Իզմիր

101.

Քիւթահիա

102. Մ. Փափազեան Տօքթօր

Ադրիանուպոլիս

103. Ռուբէն Կիւմիւշկէրտանեան Բ. Գ

Նիկոմիդիա

104. Կարապետ Ս. Խիթիճեան

Ակն

105. Գէորգ Միսաքեան Բ. 2

Ղարահիսար

106.

Արաբկիր

107. Կարապետ Խաչիկեան

Բաղէշ

108.

Պրուսա

109. Քրիստոսատուր Պետրոսեան

Եւդոկիա

110.

Ամասիա

111. Համբարձում Ալահվերտեան

Բալու

112. Յովհաննէս Աղնաւորեան

Եդեսիա

113. Յակոբ Խաթիճեան

Մանկըլըք

114.

Հաճըն

115.

Երզնկա և Բայբուրդ

116.

Թէքիրտաղ

117. Տիգրան Գ. Սիմոնեան

Կեսարիա

118. Գէորգ Գիւլպէնկեան

Խարբերդ

119. Յովհան Նաղճեան

Պարտիզակ

120. Յովհաննէս Յովակիմեան

Մուշ

121. Սահակ Գ. Գ. Փափազեանց

Տիվրիկ

122. Նշան Գարագաշեան

Զէյթուն և Մարաշ

123.

Տրապիզոն

124.

Պաղտատ

125. Մելքոն Խանճեան Բ. 2

Ֆիլիպոպոլիս

126. Միհրան Զօրապեան Բ. Գ

Վան

127. Սիմոն Մարտիրոսեան Բ. Գ

Աղթամար

128.

Հալէպ և Այնթապ

129.

Սեբաստիա

130. Մկրտիչ Յ. Մէլքեան

Ռուսճուկ

131.

Կարս

132. Աբրահամ Յ. Ալպաղեան

Չմշկածագ

133. Համբարձում Սարրաֆեան

Գաղատիա

134.

Ատանա

135.

Սղերդ

136. Ծատուր Ալէքսանեան

Եօզղատ

137. Լութֆիկ Պալեօզեան Բ. Ն

Մալաթիա

138. Գէորգ Վարդանեան

Իզմիթ

139. Պօղոս Պօղոսեան Բ.

Եգիպտոս

140.

# ՕՐԱԿԱՐԳ

Ա. Պետական կեդրոնական ընտրելի ։

Բ. Խնդիր Ազգային Ուսումնասիրութեան. — Հրահանգ քարոզագրութեան Ազգային Վարժարանաց ։

## ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ժամն 7 ½ին ատեանը բացուեցաւ ի ներկայութեան 51 երեսփոխանաց, որոց վերջին թիւն յանգեցաւ 63ի ։

Ատենապետն Մ. Պատրիարք Հայրն անձնական տկարութեան պատճառաւ չկրնալով ներկայ գտնուիլ Ժողովին, Գիւանին հրաւիրանօք ատենադպրաց նախագահ կարգեցաւ Տ. Մատթէոս Եպիսկոպոս ։

Ատենադպրութեանց ընդունելութեան կարգըն Լ. նստին էր, որուն վրայ իրաւասութիւն հրաւիրեց երեսփոխանները. սակայն շատերը յայտնեցին որ Ատենադպրութեան ատեանը շատ ուշ հասած է ձեռքերնին և դիտողութիւն ընելու պատրաստ չեն. ուստի յաջորդ նստին ձգել ՈՐՈՇՈՒԵՑԱՒ ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԻՖ. — Ազգ. Ժողովոյս վերջին նիստին մէջ՝ յաւալի միջադէպ մը պատահելով՝ պատճառ եղաւ ատենական ժամանակէն առաջ ատեանը փակելու, ներքին կանոնագրին 95րդ յօդուածին համեմատ ։ Գործոյն խնդրոյն առթիւ, որ Ժողովոյս վերջին թերթերուն պաշտօնական վարչութեան յղուած էր, մինչդեռ Պատրիարքական Փոխանորդ Հայրը ըստ հրամանի Սրբազան Պատրիարք Հօր, պէտք եղած բացատրութիւնները կուտար Ժողովիս. Երեսփոխան Փափազեան Էֆէնտին՝ առանց Օրակարգը յարգելու խնդրէն շեղելով՝ բնական բարբառի անվայել բացատրութիւններ բաժնայուց, և Փոխանորդ Տ. Հօր դէմ ծանր անարգանութիւններ ըրաւ ։

Երեսփոխան մը իրաւունք ունի միշտ ազատօրէն խօսելու Ժողովին ներկայացեալ խնդրոց վրայ, և մինչև իսկ ամբաստանագիր բերելու ազգային որ և է պաշտօնէի դէմ, բայց այս իրաւունքը պէտք է գործածուի օրինաց գծած սահմանին մէջ ։ Այս պարագային մէջ՝ Փափազեան Էֆէնտիի ըրած ընթացքը օրինաւոր...

թեան սահմանէն խարուած է, որու դէմ Դիւանը նոյն օրը ընմական ազդարարութիւններն ի գործ դրաւ. և որովհետև վերջին նիստին սպառնալից և ժամանակաւոր գաղափարմն ետև՝ անկարելի եղաւ վերստին ժողովը բանալ, դիւանս կառավարելու այսօր ևս կրկնել Փափազեան Էֆէնտիի ընթացքին դէմ իր մերժումը, և անհիմն կը հրատարակէ Փափազեան Հօր դէմ եղած այդ ամբաստանութիւնները, քանի որ օրինաւորութեամբ չեն ներկայացուած ժողովիս։

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԴ. — Խօսք կուզեմ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսք չունիք։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Դիւանին ըրած յառաջարկն ինչ կը նշանակէ և հետևանքն ինչ է, կուզենք իմանալ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանն անհիմն կուզէ հրատարակել վերջին նստին մէջ Գաւթայի խնդրոյն առթիւ ծագած միջադէպն. եթէ դուք ամբաստանութիւն մ'ունիք Փափազեան Հօր դէմ, կանոնաւոր ամբաստանագիր բերէք, որպէս զի ժողովին մէջ խնդիր ըլլայ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ըրած և մատուցած եմ արդէն ձեզ։

ԷՆՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Կուզենք որ խօսուի այս խնդրոյն վրայ՝ լուսաբանուելու համար։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը չկրնար և ոչ մէկու մը խօսք տալ, վասն զի խնդիր չկայ։

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԴ. — Դիւանին այդ ըրածը բռնութիւն է, քանի որ խօսք կուզենք և խօսքը կը զլանայ մեզ. ուստի կը բողոքենք։

Էնքսէրճեան և Ղազարոսեան Էֆէնտիներն ալ ձայնակցեցան Ամբրոսիոս Հայր սուրբի բողոքին,

Իսկ Ատենապետ Էֆէնտի իրենց հրատարակելով որ նիստ չկայ մեծամասնութեան, անցաւ ատենական գործողութեանց։

Ա.

Բացակայութիւն

Ատենապետ Էֆէնտին՝ անձնական տկարութեան պատճառաւ բացակայ մնացող երեսփոխանաց անունները թուելով՝ որք են

Պօլեօլեան Լօսօֆէթ Էֆէնտի
Պէրպէրեան Գրիգոր »

նշանակել տուաւ ներկայութեան տումարին մէջ։

Բ.

Նամակ Վարչութեան Քաղ. Ժողովոյ

Վարչութեան Քաղ. Ժողովոյ յետագայ նամակն և անոր հետ գրկուած Քաղ. Ժողովոյ 3 անդամոց հրաժարագրերը կարդացուեցան։

Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի
Ազգային Ժողովոյ.

Քաղաքական Ժողովս պատկառելի Ժողովդ ընտրութեամբ իւր պաշտօնին ձեռնարկած և անցեալ Օգոստոս ամսոյ 12էն իւր անդամներէն 7 էն ներկայութեամբ Ա. նիստը գումարելով, Ատենապետ ընտրած է Պօղոսեան Աւետիս Էֆէնտին, և Ատենադպիր՝ Մէհրէմ-Գալ Յարութիւն Էֆէնտին. իսկ այս փոխանորդներուն ընտրութիւնը եարի թողած է, մինչև որ իւր ամբողջութիւնը գտնէ։

Վասն զի Ժողովոյս անդամակիցներէն Յովհաննէսեան Կարապետ և Մագաքեան Համբարձում Էֆէնտիներն անձնական զբաղմանց պատճառաւ և Սամանճեան Յարութիւն Էֆէնտին առանց մանաւոր պատճառ մը յայտնելու հրաժարական մատուցած են, և այսպէս հրաժարելոց թիւն երեքի հասած ըլլալուն Քաղ. Ժողովս պարտաւոր է Սահմանադրութեան 40րդ յօդուածին համաձայն՝ նոյն հրաժարականները ներկայացնել պատկառելի Ժողովդ, որպէս զի բարեհաճի նորոց ընտրութեամբ Քաղ. Ժողովոյ անդամոց թիւն ամբողջացնել, որում Քաղ. Ժողովս ներկայ պարագայից մէջ մեծապէս կը կարօտի, իւր նպատակը կանոնաւորապէս շարունակելու զօրութիւն ունենալու համար։

Մնամք յարգանօք
Ի դիմաց Քաղ. Ժողովոյ Ազգ. Վարչ.
ման. Ատենադպիր          Ատենապետ
Մ. Ակիրաճեան          Ա. Մ. Փօղոսեան
2 Սեպտ. 77
ի Պատրիարքի. Հայոց

---

Ամն. Ս. Պատրիարք Հայր
Նախագահ Ազգ. Կեդր. Վարչութեան

Պատիւ ունեցայ այս ամսոյ ևս թիւ 736, օգոս. 8 թուագրեալ Ձեր բարձր Սրբազնութեան գիրն առնել, որով վերստին պատիւ կընէք ինծ հրաւիրելով զիս յանդամակցութիւն նորընտիր Քաղ. Ժողովոյ։

Սակայն Ս. Հայր, ինչպէս որ առաջին հրաժարագրիս մէջ յիշած էի, անձնական ծանր զբաղմունքս չեն ներեր ինծ այն փափուկ պաշտօնը կատարել. նկատելով նաև որ առաւելն գրեթէ մեծ մասը Պոլսէն բացակայ կը գտնուիմ անձնական գործերու պատճառաւ. Ուստի անկարելի կըլլայ ինծ հրաժարականս ետ առնել։

Ուստի կաղաչեմ Ձեր բարձր Սրբազնութենէն որ այն կրկին հրաժարագրիս ընդունել բարեհաճիք։

Որդիաբար
Ձեր բարձր Սրբազնութեան
Ամենախոնարհ ծառայ
12 օգոստ. 77          Կ. Յովհաննէսեան
Կ. Պոլիս

Ամն. Ս. Պատրիարք Հայր

Ձեր բարձր Սրբազնութեան 736 թիւ և 8 օգոստ. թուագրեալ նամակն առայ՝ որով հրաժարականս չընդունելով կրկին Քաղ. Ժողովոյ անդամակցութեան պաշտօնին կը հրաւիրէք զիս. սակայն ինչպէս որ առաջին նամակաւս ըսած եմ՝ տեսնելով որ անձնական ծանր զբաղմանցս պատճառաւ չպիտի կարենամ այն փափուկ պաշտօնը խղճի հանդարտութեամբ տանիլ, կրկին կաղաչեմ որ այն անկեղծ հրաժարականս ընդունիլ բարեհաճիք՝ որով մնամ Ձեր բարձր Սրբազնութեան.

Ամենախոնարհ ծառայ
11 օգոստ. 77          Հ. Մագաքեան

Ամն. Սրբազան Հայր
Նախագահ Ազգ. Քաղ. Ժողովոյ

Ընդունեցայ Ձեր բարձր Սրբազնութեան օգոստ. 1 թուագրեալ նամակը՝ յորում կը յայտնէք Ազգ. Քաղ. Ժողովոյն անդամակցութեան կոչումս։

Իմ խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ Ձեր բարձր Սրբազնութեան և միանգամայն Ազգ. Երես. Ժողովոյ որ պատուած է զիս իւր քուէովը։

Սակայն Ս. Հայր, ցաւելով կը յայտնեմ որ անհնար է ինծ ստանձնել այն պաշտօնը՝ որու համար Ձեր ներողամտութեան վստահելով կը խնդրեմ որ այն հրաժարագիրս ընդունիլ բարեհաճիք։

Մնամ Ձեր Սրբազնութեան
Ամենախոնարհ ծառայ
Յ. Մ. Սամանճեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք որ Քաղ. Ժողովէն 3 հոգի կայ հրաժարող, որոց հրաժարականը պարզ ըլլալով տեղի չունի պնդելու զժողովն. ուստի ըստ կանոնի պէտք է Ատենապետ դիւանին յանձնել, որպէս զի ցանկ մը պատրաստէ նոր ընտրութեան համար։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Նախ՝ հրաժարականները քուէի դրէք, թերևս Ժողովը չընդունի։

Անմիջապէս երեք հրաժարականներն ալ քուէի դրուեցան, և 11 քուէի դէմ 18 քուէով ընդունուեցան Ժողովէն։

Գ.

Դարձեալ նամակ Վարչութեան Քաղ. Ժողովոյ

Նոյնպէս կարդացուեցաւ Վարչութեան Քաղ. Ժողովէն եկած յետագայ նամակը.

Վսեմ. Ատենապետ էֆ. Ազգ. Ժողովոյ

Ազգ. Քաղ. Ժողովս Տնտես. խորհրդոյ և Ելևմտից Հաշուարարութեան ընտրութիւններն կատարելէ ետև՝ անհրաժեշտ պէտք կը տեսնէ Եկեղ. սնտուկին ներկայ 77-78 տարւոյ հաշուեկշիռն առձեռն ունենալու, որպէս զի կարելի ըլլայ ըստ այնմ Եկեղ. սնտուկին ելմտական գործառնութեանց պէտք եղած ուղղութիւնն ընծայել:

Ուստի Քաղ. Ժողովս՝ դիմելով պատկառելի Ժողովոյդ՝ կառաջարկէ որ բարեհաճի այս խնդրոյն վրայ իւր ուշադրութիւն դարձնել, և հաշուեկշիռն յանձնել Վարչութեան, որու առաջարկութիւնը բացատրել աւելորդ է:

Մնամ յարգանօք

Ի դիմաց Քաղ. Ժողովոյ Ազգ. Վարչ.

| | |
|---|---|
| Ատենադպիր | Ատենապետ |
| Մ. Ալիքսանեան | Ա. Մ. Քօչեան |

2 Սեպտ. 77

ի Պատրիարք. Հայոց

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քաղ. Ժողովոյ ըրած այս երկրորդ խնդիրն Պիւտճէի մասին՝ արդէն օրակարգն է. շատ աղէկ կ'ընէ Քաղ. Ժողովը Պիւտճէի փութացումը խնդրելով. Ժողովին կը մնայ զայն փութացնել:

Զ.

Առաջարկութիւն Քարաքաշեան Էֆէնտիի

Ազգ. Երես. Քարաքաշեան Նշան Էֆէնտիի կողմէ մատուցուած յետագայ առաջարկութիւնը կարդացուեցաւ.

Վսեմ. Ատենապետ էֆ. պատկառելի
և Ընդհ. Ժողովոյ

1875 տարւոյ շրջանի փակման երեք չորս ամիս յառաջ, նոյն շրջանի Քաղ. Ժողովոյ մէկ անդամի անձնական շահու պաշտպանութեանը ոգւով, Տիվրիկու պատուարժան Առաջնորդին դէմ տեղի ունեցած անիրաւ ժողովրդային զըրպարտութեանց կարևորութիւն տալով, և 150 ամեայ կտակի գոյքը մասնաւոր Հաշուարարութեան մը և անկարող պետի մը փոխանորդ կարգած անխիղճ բանակալի մը հաւատացած վանական կալուածները ապահովելու համար կրկին խնդրագրով պատկառելի Ժողովիս դիմած էին, յետ մի քանիցս անգամ՝ այդ մասին բայց ներկայացութեան արժանի Մութէվէլլի էֆէնտին իր առկայութեամբը հաստատած կէտերը դարմանելու համար ամբողջապէս դիտել և վերստանել վերջ:

Վերջ ի սկզբ Ժողովոյս անմիջական ապահովութեան գործադրութեան ուղղելը տեսնելով առ Վարչութիւն՝ զատուկ բացառական կենաց վերածնիլը տեսանելու յոյս մը յղացած ալ էն թէև, սակայն այս ուղղման վերայ երկու տարի մը չափ ժամանակ անցած և երկու Վարչութիւն փոխուած ըլլալով, տակաւին այդ խեղճ զատուկ բացառական կենաց ապառնալից երկու խնդիրը կմնայ իր վաղեմի և ձգտակոր գերին մէջ:

Արդ այս յապաղման մէջ և ամէն նորութեան առ այժմ պատկառելի Ժողովոյդ յայտնել հարկ համարելով, կառաջարկեմ որ այս երկու խնդիրը նորընտիր Վարչութեան ուղղուի, Գաւառ. Ժողովոյ յարգն ու համբաւը արժանապէս վայելող պատուարժան և յանկուցիչ կոխանդալ անձեղ Առաջնորդին ի պաշտօն հաստատութեան անմիջական ուղղումը տրուելու, որ փութալի խնդիր է ներկայ տագնապալից վիճակին նկատմամբ:

Նոյնպէս կտակի գոյից անմիջական ապահովութեան համար մինչև ի կարգադրութիւն հաշուոց և հիմնական բարեկարգութիւն, ըստ փոյթ այդ Խնամակալ Հոգաբարձութեան տեղ այդ հաստատութիւնը կառավարելու և մատակարարելու անկարող Մութէվէլլի օգնական յանձնելով այն ատեն երկու Տիվրիկցիք՝ որք զատուկ գլխաւորութեամբը տեղւոյս պանդխտութեան օրինաւոր բաժակութեամբ ընտրուած են:

Կառաջարկեմ որ 15 օր պայմանաժամով ուղարկուին այս երկու խնդիրը Վարչութեան, որ որոշելով պայմանաժամին կամ գործադրուած ըլլալուն տեղեկութիւնը և կամ չկրնալ գործադրուելուն պատճառը ծանուցանէ Ժողովիս:

2 Սեպտ. 77 Նշան Քարաքաշեան



ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պատկառելի Ժողովը գիտէ որ Տիվրիկի խնդիրը հին է և արդէն ալ զեկուցագիրներ եկած են այս մասին, որոնք Վարչութեան յղուած են. եթէ Ժողովը հաւանի է Դիւանին, այս առաջարկութիւնն ալ կը յղենք Վարչութեան առանց պայմանաժամի ի տեղեկութիւն:

Է.

Դարձեալ Առաջարկութիւն Քարաքաշեան Էֆէնտիի

Նոյնպէս Քարաքաշեան Էֆէնտիի կողմէ մատուցեալ յետագայ առաջարկութիւնն ալ կարդացուեցաւ.

Վսեմաշուք Ատենապետ էֆ
Պատկառելի Ընդհ. Ժողովոյ,

Ազգ. Վարչութեան իրաւաքննիչ ճիւղերու քննելն ուշանալը և վճիռներուն շատ մը անկարգութեանց և պեղծմանց տեղի տուելովը՝ հանրական և մասնական շատ մը անդարմանելի վնասուց գոյացման վերջ տրուելու համար, կառաջարկեմ որ իրաւաքննիչ Ժողովոյ և Խորհրդոց ներքին կանոններ և վարչական օրէնքներ խմբագրել ձեռնարկեմք ընդ փոյթ:

2 Սեպտ. 1877 Ն. Գարագաշ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ Ժողովը կուզէ նկատողութեան առնուլ այս առաջարկութիւնը, պէտք է իր քուէովը յայտնէ:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Առաջարկութիւնը նոր չէ. անցեալ տարի մը յառաջ ես ալ նոյնը մատուցած եմ և նախընտրութեան յղուած է. բայց դեռ պատասխանը չէ եկած:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կանոնագրի պէտքը կզգանք, բայց Վարչութիւնը պէտք է որ ծրագիր բերէ և այս Ժողովը վաւերացնէ. ուստի նորընտիր Քաղ. Ժողովոյ յիշեցնէ որ եթէ իրեն ալ պէտք ունի ծրագիր մը շինէ և բերէ:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Իմ առաջարկութիւնս չէ թէ կանոնական, այլ օրէնսդրական էր. ես կառաջարկէի դատական օրինագիր մը սահմանել:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ազգ. դատարանը մինչև ցարդ իր ընթացից համար կանոնագրի պէտք չէ տեսեր, որ առաջ կարևորութիւնը խնդրեցինք Վարչութեան, որում անկ է ծրագիր մը բերել վաւերացման համար. մեր պարտաւորութիւնը չէ ծրագիր շինել:

ՔԱՐԱՔԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Ես իմ առաջարկութեանս մէջ թէ՛ կանոններ և թէ՛ օրէնքներ միանգամայն ըսած եմ. ըսել է թէ Քափամաճեան էֆ. ի հետ մէկ ենք. իսկ Փափազեան էֆ. ի գալով որ կըսէ թէ երբ Վարչութիւնը պէտքը տեսնէ ծրագիր բերելու է, միթէ մենք չե՞նք գիտեր պէտքը:

Քարաքաշեան էֆ. ի առաջարկութեան վրայ ուրիշ դիտողութիւն չըլլալով, Փափազեան էֆ. ի առաջարկած յղումը քուէի դրուեցաւ, և Ժողովը միաձայնութեամբ ընդունեց Վարչութեան յղել մէկ ամսէ ետև պատասխանը բերելու պայմանաւ:

Ժողովս առանց դիտողութեան և միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ Ատենապետ Էֆէնտիի առաջարկած յղումը:

Ը.

Հարցապնդում 4 երեսփոխանց

Առ Վարչութիւն ուղղեալ յետագայ հարցապնդումը կարդացուեցաւ.

Վսեմափայլ Ատենապետ Էֆէնտի
Ազգային Ժողովոյ,

Ներկայ քաղաքական տագնապալից պարագաներուն մէջ, մինչդեռ Հայոց ազգն իր առ Օսմանեան Պետութիւնն ունեցած զօրաւոր հաւատարմութեան ու անձնուիրութեան նորանոր փաստեր տալով՝ Տէրութեան խնամքն ու պաշտպանութիւնը վայելելու իրաւամբ արժանի ըլլալուն աչքառու ցոյց կուտայ, ցաւալի է տեսնել

հայ թերթ մը, որ իր վերջին թուին մը թէև-րաքը՝ Ազգին մէջ քաղաքական կուսակցելի նե-րպատակներու ծառայող կարգ մը անձինք կակ-նուրկէ եկեղեցական և աշխարհական, որք իբր թէ մինչև իսկ Ազգային Ժողովս և Ս. Պատ-րիարք Հօր վրայ ազդեցութիւն բանեցնելով՝ ի-րենց գիտմանց հասնելու կը նկրտին եղեր ։

Այսպիսի անպատեհ և անտեղի հրատարա-կութիւն մը թէև չկրնար Հայոց ազգին մինչև այսօր անարատ պահած անդրդուելի հաւատար-մութեան համբաւը աղարտել, կրնայ սակայն օտարներու գաղափարը վիրաւորել և օտարաց առ գայթակղութեան առիթ ըլլալ ։

Տեսնք թէև որ Պատրիարքարանն յիշ-եալ ձախող հրատարակութիւնն ի պաշտօնէ հերքելով ազգայնոց վրայ ըրած անտր ազդե-ցութիւնը մասամբ փարատեց, բայց կը փափա-քիմ գիտնալ թէ անոր ազդեցութիւնը բոլո-րովին ջնջելու համար Ազգ. Վարչութիւնն ու-րիշ ինչ միջոց ի գործ դրաւ և թէ կրնա՞յ ար-դեօք Ժողովս հաւատալ ։

2 Սեպտ. 1877 Կարապետ Ս. Խաթինձեն.
Յ. Մէրէնէմ-Գուլի Յ. Նորատունկեան
Մ. Գարամանճեան

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Հարցումնագիրը Մէրէնէմ-Գուլի էֆէնտին ալ ստորագրած է, մինչդեռ ինքը Վարչութեան անդամ է ։

ՄԷՐԷՆԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Վարչութեան անդամ ըլլալս մասին անհարկութիւն եղաւ. սա այդ կը պատասխանեմ՝ որ ես հիւանդ էի այն միջոցին՝ երբ Վարչութեան անդամակցութեան կոչուած ըլլալս հրաւէրն ընդունեցայ և չկրցի հրաժարականս հաս բերել ։

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Եթէ կը հաճի Ժողովս, այդ խնդրոյն առթիւ ինչ որ այս օրե-րս ոստիկանութեան կողմէ պատահեցաւ ինծ, Երիտասարդ և Փափազեան էֆէնտիներուն՝ ոչ իբր քաղաքացի կամ խմբագիր, այլ իբր ե-րեսփոխան, պատմեմ ։

ՄԷՐԷՆԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Մեր հարցա-ցնմնան նպատակն ոչ թէ խնդիր յուզել է այս Ժողովին մէջ, այլ միմիայն գիտնալ թէ Վարչութիւնն ինչ ըրած է այս մասին. զի ան-փոյթ գտնուիլն գայթակղութեան առիթ լինի թերևս. եթէ բան մը չէ ըրած՝ անտեղի հը-րաւէր մ'է այս մեր հարցումն, ուրեմն զի պէտք եղածն ընէ ։

ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք որ այս հարցումնագիրը ստորագրող էֆէնտիներն ազգա-յին երեսփոխանութեան պատւոյն նախանձա-խնդիր գտնուելու մէջ կը խնդրեն որ Վար-չութիւնն ըսէ թէ ի՞նչ ըրած է այն թերթին նկատմամբ՝ որ մասնաւորութիւններ հրատարակած է. Դիւանն ըստ կանոնի պարտ կը համարի նախ քուէի դնել Ժողովոյ կարծիքն խնդրելու համար թէ կուզէ՞ արդեօք եղած հարցումն մեկ ընել ։

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Նախ հարցու-ցէք Ժողովին թէ կուզէ՞ լսել մեր պատմութի-նը. վասն զի սանկ մեր ընելիք պատմութեան ինչ որ պիտի ըսէ Վարչութենէն՝ թերի է. ես այնպիսի անցքերութիւններ պիտի սամ՝, որոնց-մէ պիտի տեսնուի թէ այս Ժողովէն դուրս պաշ-տօնեայ մը ի՞նչ տարփանն ազդեցութիւն կը բա-նեցնէ երեսփոխանաց վրայ. երեսփոխաններէն ոմանք գրգռուած են իբր քաղաքական յան-ցաւոր և իբր ապստամբ տէրութեան դէմ. սա մի ոստիկանութիւնն՝ ինչպէս որ ամբողջ-թիւն է, նախնական քննութիւն մը պարտաւոր էր ընել, զոր ըրաւ և ըմացուց. այդ գրգռ-ուած երեսփոխաններէն մէկն ալ ես էի. եթէ Ժողովս արտօնութիւն տայ, կը պատմեմ մեր գլխուն եկածը և եղած հարցաքննութեան հե-տևանքը, որոց վրայով Վարչութիւնը տեղե-կութիւն չունի ։

ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ. — Օտեան էֆէնտիի ը-սածներէն կը հասկցուի թէ այնպիսի միջադէպ-ներ տեղի ունեցեր են, որոց համար նախ պէտք էր Վարչութեան դիմել և եթէ արդիւնք մը չը տեսնուէր՝ այն ատեն հոս գալ դիմելու. բայց Վարչութիւնը չգիտէր եղեր, վասն զի իրեն չէ դիմուած ։ Այժմ խնդիրն իր սահմանին մէջ դո՛ւր է մտնենք. քուէի մը երեսփոխան կա-



դէն խմանալ Վարչութենէն թէ ինչ ըրած է այս պարագաներուն մէջ. Օտեան էֆէնտի ալ կուզէ կոր ժամանակէ իրեն գլխուն պատահած-ները պատմելով. ուրեմն նախ քուէի պիտի դը-նեմ թէ Ժողովը կուզէ՞ նկատողութեան առ-նուլ այս խնդիրը ։

Անմիջապէս քուէի դրուելով ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱՒ նկատողութեան առնուլ ։

ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ կը հրաւիրեմ Վարչութեան պատասխանատու պաշտօնեայն՝ թէ կրնա՞յ մի տալ պէտք եղած բացատրու-թիւնը ։

ՔՕՂՕՂԵԱՆ Ա. ԷՖ. — (Ատենապետ Քաղ. Ժողովոյ) Վարչութիւնը չկրնար այսօր պատաս-խան տալ. այլ կարօտ է որ հարցմունքն ի պաշտօնէ իրեն յղուի, որպէս զի անոր խորհր-դակցութեան համեմատ պէտք եղած պատասխա-նը տայ ։

ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն հարցումնագու-մը պէտք է յղենք Վարչութեան ։

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Իմ պատմու-թիւնս ալ կուզէ՞ լսել Ժողովը. քուէի դրէք ։

ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ. — Նկատառումն ընդուն-ուած և խնդիրը վերջացած է այսօրուան հա-մար. կը մնայ յառաջիկային լսել երբ Վարչու-թենէն պատասխանը գայ ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Սխալ մեկնուեր են ոստիկանութեան առջև այն խօսքերն՝ որ այս ատենին մէջ տեղի ունեցան այն օրն՝ երբ Ս. Պատրիարք Հայրն Օսմանեան նշան առած ըլլա-լը կը ծանուցանէր Ժողովին. զժբաղդաբար նոյն օրուան Ատենագրութիւնն ալ հրատարակուած չէր և տպածն չունէինք որ ցոյց տայինք ոս-տիկանութեան պաշտօնէին ։ Անշուշտ անցից վրայ նոյն օրը տեղի ունեցած հարցումնգման ի-մաստն ալ սխալ հասկցուեր են ։

ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ ըսածներնիդ կըր-նաք Ս. Պատրիարք Հօր հասկցնել և Վարչու-թեան յայտնել. հոս տեղը չէ ։

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Քաղաքական անհարկութեամբ չէ խօսքերնիս, և Վարչու-թեան դէմ ալ գանգատ մը չունինք. իբր երես-փոխան մեր գլխուն եկածը պատմել կուզենք. վաղը ուրիշ երեսփոխանի մ'ալ կրնայ պատահիլ ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Մեր կարծեցեա՞լ ենք թէ ոչ. քուէի դրէք ։

ԱՍՏՆԱՊԵՏ ԷՖ. — Քուէի դնելու բան չը կայ. ըսի թէ այդ խօսքերն ընելու տեղը չէ հոս, կրնաք Պատրիարքին և Վարչութեան հասկը-ցնել ատոնք ։

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Եթէ քուէի չէք դներ մեր կասկածելի ըլլալը կամ չըլլալը, ու-րեմն մեք կհրաժարինք. [զայս ըսելով՝ իր հրա-ժարականը գրելու ելաւ, զոր չընդունեցին այլք] ։

ՔՕՂՕՂԵԱՆ Ա. ԷՖ. — Երեսփոխաններէն ոմանք կըսեն թէ իրենց հաւատարմութիւնը կաս-կածի տակ ձգուած կայ. միթէ երեսփոխանաց մէջ ատենի բան մը ըսող կա՞յ. ո՛չ. ինչո՞ւ ուրե-մն իրենք զիրենք կասկածելի ցոյց տալով բաժ-կուզեն Ժողովին ։ Այս Ժողովին դուրս շատ բան ըսուած կրնայ ըլլալ իրենց համար ալ, մեզ համար ալ. Ոստիկանութիւնն ալ կրնայ չէ հարցնէ. ինչպէս հոս՝ ամեն տեղ կրնան պատահիլ ատենի բաներ. բայց վերջապէս սխալմունքն երևան կել-նէ և կջնջուի ամեն բան ։ Երբեք պէտք չէ հա-ւատալ որ Երեսփոխանական Ժողովին մէջ մէկը միւսին համար ատենի կասկած մը մտքէն ան-ցամ անցնէ ։ Վարչութեան գալով՝ թող չկար-ծուի թէ նա անփոյթ կեցած է և չխորհիր այդ պարագաներուն առջև առնուլ ։ Իսկ մեր ամ-նու ընկերակցաց մէջ՝ վստահութեամբ կըսեմ թէ չկայ մէկն՝ որ կրօն. կամ քաղ. նկատմամբ դըր-չապատութեան մար մը քաշէ մէկուն դէմ, ինչ-պէս որ ատենագրութիւննիս՝ երբ ի լոյս ելնէ՝ կը հաստատէ ։ Ուրեմն գոցենք այս խնդիրն՝ որ այլ ևս աւելորդ է հոս յուզել, և դառնանք օ-

պաշտօնական վկայութիւն է՝ իբրեւ Պատրիարքական փոխանորդէ ստորագրեալ՝ ընդ դէմ մեր և ինքնուստ գործողաց , որք ատենութեան Վ․ եմ․ պաշտօնէին առջեւ դեռ իբրեւ ազգային խռովութիւնը փորձող և Պատրիարքը ու Ժողով տապալող դրդռած էին ։

Իսկ քաղաքական այս ծանրակշիռ միջոցին մէջ կը պարտաւորիմ պահանջել նոյն փոխանորդ Տ. Հօր առժամանակեայ դադարումն ի փոխանորդութենէ , որպէս զի իր պաշտօնական դիրքովը ընդ դէմ մեր քաղաքական ազդեցութիւն չը բանեցնէ , և անմիջապէս ի դատ կը հրաւիրեմ զինքը այս զրպարտչական վկայութեան պատիժը կրելու ։

Ազգ. Երեսփոխան
Ս. Գ. Գ. Փափազեան

2 Սեպտ. 77

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսեցիք , Երեսփոխան Տեարք , Փափազեան Ստեփան էֆ. ի բերած ամբաստանագիրը . ես ալ հիմա կարդացի զանի . կարծեմ որ անոր մէջ բառ. մաս մը կայ որ ոչ միայն արդէն լուծուած է , այլ եթէ հակառակին ալ ենթադրուի , այդպիսի խնդրոյ մը քննութիւնը մեզի չը պատկանիր . ասկէ զատ ուրիշ բան չը պարունակեր եթէ ոչ Խարբերդի խնդրոյն առթիւ լսածներուն կրկնութիւնը. պէտք է գիտնալ թէ Ժողովս կը կամի՞ արդ իբր կանոնաւոր ամբաստանագիր նկատողութեան առնուլ . առ այժմ կրկնութիւն մը չկայ հաստատելու . նախ նկատառումը պէտք է քուէի դնել ։

Տ. ՅՈՎՀ. ՔՀՆՅ. ՄԿՐԵԱՆ — (Պ. Փ.) Անցեալ նիստին մէջ Խարբերդի խնդրոյն առթիւ պատահած միջադէպին վրայօք այսօր բողոք մը մատուցանելի և պատրաստած ալ էի , բայց տեսայ որ գլուխը միրժեց նոյն միջադէպը և կանոնաւոր ամբաստանագիր պահանջեց . հիմա որովհետեւ Փափազեան էֆ. ամբաստանագիր կը մատուցանէ , ես ալ իմ բողոքագիրս կը մատուցանեմ ։

Զայս ըսելով փոխանորդ Հայրն իր բողոքագիրը յանձնեց դիւանին ։

Ձայներ. — Փոխանորդ Հօր բողոքագիրն ալ թող կարդացուի ։

ՄԵՐՃԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Եթէ ամբաստանագիրը հակակշռելու համար է՝ հարկ չկայ . նախ Փափազեան էֆ. ի ամբաստանագիրը քուէով ընդունինք կամ մերժենք , ապա փոխանորդ Հօր բողոքագիրը կարդանք ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ի՞նչ զարմանալի բան է որ երբ նախընթաց նիստին բանիւ կ'յայտնէի՝ դուք գրով ուզեցիք ամբաստանութիւններս. այսօր ալ երբ գրով կ'ներկայացնեմ , կանոնաւորի գիտողութիւն մը կ'հանէք . չգիտեմ՝ այդ բառով ի՞նչ ըսել կուզէք ։ Ես լսածներ ունիմ , դուք ալ թերեւս լսած էք , սակայն ես այն խորութիւնները միայն պիտի ներկայացնեմ , զորս տեսած եմ ։ Թէ որ ամբաստանագիրս թերութիւն ունի , ըստ որում նոր է սակայն մեզի համար , դուք ինչպէս որ կուզէք՝ գրեցէք և ես ստորագրեմ ։ Բայց դուք դատեցէք . թող այս ազգային ատեանը դատ մը տեսած ըլլայ ։ Եթէ չենք կրնար Պատրիարք դատել , Քաղ. Ժողով դատել , գէթ ամբաստանեալ փոխանորդի մը դատաստանին սկզբնաւորութիւնն ըրէք ։ Խարբերդի խնդիրը ժամանակութիւն մ'է , դէպքը բերաւ որ գիտցածներս մէկ բանին ըսի ։ Թէ որ կամք ունիք դատելու , առաջին օրինակն իմ վրայ ցուցուցէք , և թէ որ չկրնամ հաստատել՝ պատժեցէք զիս իբրեւ զրպարտիչ . ես ալ ինծի տեղեկութիւն տուողներուն երեսը կը թքնեմ ։ Ես մինչեւ 2—3 ամիս առաջ բարեկամ էի փոխանորդ հօր հետ , ետքը զարհուրեցայ բարեկամութենէս . չէի երթար իր սենեակը , ինք ալ գիտէր . ինչու որ լսածներ ունէի իր վրայօք ։

Գալով քաղաքական ճնշման կէտին , անցեալ ուրբաթ օր փոխանորդ Հայրը բոլոր կուսայ Խառն Ժողովին և հեռանալ շաբաթ օրը կ'հրատարակուի իր բոլորը լրագրոց մէջ . քանի մ'օր յառաջ Փանոսեան էֆէնտի կ'աշխատի ապահովութենէն , Ղալաթիոյ օձախը կ'փնտռուի , մենք ալ նոյն շաբաթ երեկոյ կ'փնտռուինք , և մեր աքսորման տարաձայնութիւնը կ'ելնէ . իբր թէ մեք դժգոհ ենք եղեր Արքայեան Պատրիարքին Օսմանեան նշանն առնելուն համար . մեր Պատրիարքը և Վարչութիւն տապալելով ազգին մէջ խռովութիւն յարուցանել ենք եղեր ։ Նոյն շաբաթ օրն Լրագիր անուն թերթն ալ կը հրատարակէ թէ յիշուած չէիւր ձայներ պիտի ելնեն Ղալաթիոյ և Խասգիւղի մէջ ։ Փոխանորդ ալ Հօր բողոքագրին մէջ խռովարար ըլլալնուս վկայութիւնը կայ մեզ համար , որոյ քննութիւնը պէտք է կատարուի , որպէս զի կասկածութեան առջեւ մեր անմեղութիւնն հաստատուի ։



ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք որ Փափազեան էֆ. իր ամբաստանագրով դատի տակ առնել կուզէ փոխանորդ Հայրն . Ժողովին կը մնայ իր քուէովն որոշել զայս . երբ այս կէտն ընդունուի՝ այն ատեն կը խորհինք թէ ինչպէս պէտք է դատը տեսնել ։

ՄԵՐՃԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Չը հասկըցայ՝ ի՞նչ է քուէի դրուելիքը . Փափազեան էֆէնտիի ամբաստանագի՞րը թէ փոխանորդ Հօր բողոքագիրը ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քուէարկութեան ենթարկելիքը Փափազեան էֆէնտիի ամբաստանագիրն է . Ժողովը զայն նկատողութեան առնուլ կուզէ՞ թէ ոչ . այս պիտի հարցընեմ ։

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Տակաւին չհասկցուեցաւ ամբաստանագրոյն ի՞նչ ըլլալը . ինչո՞ւ թերադէմ խօսիլ չուզեր . եթէ այդպէս քուէի դնէք՝ Փոխանորդին կուսակցութիւնը նկատողութեան չենք առնուր ըսել պիտի հետեւի ։

Անմիջապէս Փափազեան էֆէնտիի ամբաստանագիրը քուէի դրուելով , Ժողովը 4 քուէի դէմ 22 քուէով զայն նկատողութեան առնուլ ՈՐՈՇԵՑ ։

Ընդ Փոխանորդ Տէր Հօր բողոքագիրն ալ կարդացուեցաւ , որ է ։

Վսեմափայլ Ատենապետ էֆէնտի
Ազգային Ժողովոյ ,

Ազգ. Ժողովոյ վերջին նիստին երեսփոխան Փափազեան Ստեփան էֆէնտիի արձակած անլուր և տարօրինակ թշնամանքներն յայտնի են , թշնամանք՝ որով մեղանչած է նոյն իսկ Ազգային Ժողովոյ պատկառանացը , և իմ երեսփոխանական և պատրիարքական փոխանորդութեան և անհատական պատւոյն դէմ , Պատրիարքարանը Գաթողիկէն և զիս կաշառակեր անուանելով , և յաւելնելով իսկ՝ թէ այնպիսի յայտնութիւններ ունի որ ատենով պիտի պատճառեն , և փոյթ եղեր է այն Հայուն որ Փոխանորդարանի հետ գործ ունի եղեր ։

Ազգ. Ժողովոյ պատւոյն և պատկառանաց դէմ եղած թշնամանաց դատախազ և դատաւոր նոյն ինքն Ազգային Ժողովը ըլլալով , կը թողում այդ կէտը , և կանգնիմ դատախազ կանգնիլ իմ անձնական պատւոյս որ արատաւոր գինն է ։

Փափազեան Ս. էֆէնտի կրնայ և ազատ է զիս և ուզած անձն ամբաստանել , բայց առօրէն կերպիւ ամբաստանելու պատրուակին տակ ոչ ոք կրնայ թշնամանել , զոր՝ ո՛վ և է ըլլայ չկրնար ընդունիլ ։

Մասնաւոր բողոք մ'արդէն մատուցած եմ Ազգ. Վարչութեան Խառն Ժողովոյ , որ պատկառելի Ժողովոյդ անօրինաւոր ատեան որոշեց . և ահա այսօր ալ դիմելով պատկառելի Ժողովոյդ արդարասիրութեանը , գլխովին չունիմ կը կը բողոքեմ պատւոյս և պաշտօնիս դէմ եղած թշնամանաց , և հրապարակային քննութիւն ու դատաստան կը խնդրեմ . կանխաւ յայտարարելով՝ որ եթէ յաւէտ քննութեան իմ յանցապարտութիւնս վճռուի . սիրով և հաճութեամբ պիտի տանիմ որքան ալ խիստ լինի իմ պատիժս . իսկ եթէ անպարտ ըլլալս յայտնուի , որուն բնաւ տարակոյս չունիմ հարկին Ատենիդ ։ այն ատեն կատարել անյիշաչարութեամբ պիտի ներեմ իմ ամբաստանչիս զրպարտութեանց , որպէս վայել է Քրիստոնէի և եկեղեցական պաշտօնէի ։

Այս է ուստի իմ բողոքս և պահանջումս , որ միմիայն իմ պատիւս պաշտպանելու և իրաւունքս արդարացնելու համար պիտի ծառայեն . և որ հեռի են բոլորովին հակառակութեան , ո-

խաղաղութեան և միջնորդութեան գաղափա_րներէ. ուստի կրկին կաղաչեմ զպատկառելի Ժողովդ՝ որ բարեհաճի այս օրէն հրաւիրել զՓա_փազեան Ս. Էֆէնտին օրինաւոր խորհրդատուա_կիր ներկայացնելու, և խնդրած քննութիւնս և դատաստանս պաշտպանելու Ատենին հրամա_յելու։ Մնամ սիրելի Ազգիս և Եկեղեց_յ[ւ]ոյ 2 Սեպ. 1877 եւ անձնանուէր ծառայ

Ազգային երեսփոխան և Պատր. Փոխ.
Յովհ. Քհնյ. Մկրեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահաւասիկ կանոնա_դրութեան մէջ այն յօդուածն՝ որ այս պարա_գային մէջ մեզ առաջնորդ կրնայ ըլլալ. [և կար_դացուց Կանոնադրութեան 84րդ յօդուածը ծայրէ ի ծայր]։

Արդ թէպէտ Փոխանորդ Հայրն իբրև Վար_չութեան մէկ կը համարուի, այս կերպով պէտք է դատել. իսկ թէ որ իբրև սակ պաշտօնեայ ընտրուի, պէտք է Վարչութեան յղել։

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Կանոնադրութեան այն յօդուածը՝ զոր Ատենապետ Էֆէնտին կար_դաց հիմա, միմիայն Ազգին երեսփոխանութեան քննել Պատրիարքին և Վարչու_թեան երկուց ժողովոց կվերաբերի. իսկ փոխա_նորդը Խառն ժողովէն կընտրուի. ուստի այդ յօդուածը ինձ չզօրէր այս պարագային մէջ. պատասխանատուութեան Խորհրդոյ նախագահ ըլլալովն ալ չզօրէր. իբրև սակ պաշտօնեայ նկատելով պէտք չէ այնչափ բարձր զիրք տալ և Եպիս. ժո_ղովին զբաղեցնել։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ աղէկ. եղբայրա_ցութիւնք կամ կարծիքնիդ ինչ է, այն ը_սէք։

Տ. ՄԱՏԹ. ԵՊՍ. — Կ'եզրակացնեմ որ ըստ որում փոխանորդ Տ. Հայրը հրապարակաւ դա_տաստան կպահանջէ, ինչպէս նաև ամբաստանող Փափազեան Էֆէնտին, և ըստ որում այնպիսի կերպարանք առաւ այս խնդիրը, որ հասարակաց կարծիք կ'յուզէ և կգրաւեցնէ, ուստի թող երկու հոգի փոխանորդ տէր Հայրը ցուցնէ իր կողմէն, երկուք ալ Փափազեան Էֆէնտի իր կողմէն և Ժողովս ալ հինգ հոգի իր կողմէն. այս կերպով կազմուած Մասնաժողով մը՝ դատաստան ամեն կող_մնակցութենէ, թող քննէ և տեղեկագիր մատուցանէ Ժողովոյս։ Ահա այս է իմ կարծիքս։

Տ. ՅՈՎՀ. ՔՀՆՑ. ՄԿՐԵԱՆ. — (Պ. Փ.) Կընդունիմ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ալ կընդունիմ։

ՄԷՐՍԷՄ-ԳՈՒԼԻ Օ. ԷՖ. — Խօսք կուզեմ. Փափազեան Էֆէնտիի ամբաստանագրոյն նկա_տմամբ ձևին վրայ պիտի խօսիմ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը քուէարկեց ամ_բաստանագիրն և անոր նկատառումն ընդունեց. այժմ դատողան պիտի զրկենք. ուրեմն խօսքն այս վերջին կէտին վրայ է։

ՄԷՐՍԷՄ-ԳՈՒԼԻ Օ. ԷՖ. — Ժողովն ամ_բաստանագրոյն նկատառումը քուէարկած ատեն՝ ես մէջտեղերն չէի. հիմա քանի որ նկատառու_մն ընդունուած է, ես ալ խօսելիք ունիմ։

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Նկատառումն ըն_դունուելէ ետև հարկ է որ Օրակարգին անցնի մի_ձայնանալու համար, այսօր չենք կրնար խօսիլ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ Ժողովն ստիպողա_կանութիւն տայ, այսօր կը խօսինք. ուստի ըն_թացակարգութիւնը քուէի պիտի դնեմ։

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԴ. — Ստիպողականու_թեան խնդիր չկայ. քանի որ փոխանորդ տէր Հայրն և իր ամբաստանողն Մատթէոս Սրբազա_նի առաջարկած դատական ձևն ընդունեցին, և սոյն հակառակ դիտողութիւն ըսող չկայ, պէտք է որ նախ այս կէտը քուէարկութեան դրուի։

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — [Ատեն. Քաղ. ժողովոյ] Նախ և առաջ տէր Հօր բողոքագրոյն մէջ կէտ մը կայ. կըսէ թէ արդէն Վարչութեան մասնաւոր բողոք մը տուած և պատասխան ընդունած եմ. որ թող Ազգ. Ժողովն զայս խնդիրը և ետքը կնա_յինք. անանկ չէ. Վարչութիւնը ինձ չըսեր թէ չեմ նայիր այս խնդիրը, միայն թէ փոխանորդ տէր Հայրը չըսաւ թէ դուք նայեցէք, այլ ի_մաստասիրեցէք և ես Ազգ. Ժողովին պիտի դիմեմ ըսաւ. Ուստի չընդունեցինք. Հիմա եթէ Ազգ. Ժողովն առաջարկուած ձևով Յանձնաժողով մը զննելու ըլլայ իր կողմէ խնդիրը քննելու համար, Վարչութեան Քաղ. Ժողովն պատրաստ է գործակցել կամ ո՛չ Ազգ. Ժողովոյ վճռին այս մասին։

Այս միջոցին Մէրսէմ-Գուլի Էֆ., որ ար_դէն ըսած էր, մինչև կուզէր խօսիլ Փա_փազեան Էֆէնտիի ամբաստանագրոյն վրայ, Օձ_եան Էֆէնտի ընդմիջելով թոյլ չէր տար, և կը պահանջէր նախ յայտնել թէ ինչ նիւթի վրայ պիտի խօսի։

[Աղմուկ]

Ատենապետ Էֆէնտի ալ մեկը համոզելու համար քանիցս ազդարարութիւններ ուղղեց եւ, խօսք տուաւ Մատթէոս Սրբա_զանին։

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Անշուշտ խօսքը Մէրսէմ-Գուլի Էֆէնտիին է. ոչ որ կրնայ ար_գիլել զայն խօսելէ. բայց նախ՝ ինչ նիւթի վրայ է խօսելիքն, այն պէտք է յայտնէ. վասն զի ինծ դատական ձևին վրայ խօսել տրուեցաւ, որուն մը ամբաստանագրին վրայ խօսել կը տուի, ո՞րն է խօսուելու նիւթն, այս պէտք է նախ որոշել։

ՄԷՐՍԷՄ-ԳՈՒԼԻ Օ. ԷՖ. — Ամբաստանա_գրին պարունակութեան վրայ պիտի խօսիմ. Փափազեան Էֆէնտիի ամբաստանագրէն այնպէս հասկցայ որ Փոխանորդ Հօր պաշտօնանկու_թիւնը կը պահանջէ, որպէս զի իր դատը յա_ռաջ տանի. Սակայն խնդիրը զանազան զա_նազելով այնպիսի ճառագիտու որ Փոխանորդին պաշտօնականութեան խնդիրը մէջ խառնեց և դա_տական եղանակի խնդիրը ծագեցաւ. Մեր կողմէ դատական եղանակի մասին առաջարկ_ուած Մասնաժողովն ընդունեցին թէ ամբաս_տանողն և թէ ամբաստանեալ միաձայնութեամբ. Եթէ Ժողովն այս խնդրոյն համար որոշում մը



պիտի տայ, պէտք է գիտցուի թէ ինչ է իր ըրածն. Եթէ Պատր. Փոխանորդ մը կամրա_տութեան երեսփոխանի մը կրնայ. միթէ հա զա_լու խնդիր է այս. Ամենայն Էֆէնտիի կար_ծածն կանոնագրական յօդուածը կարծեմ բա_ցական է հաստատելու թէ այնպիսի ամբաստա_նական խնդիր մը չէ թէ Ազգ. Ժողովն մէջ, այլ Վարչութեան մէջ կրնայ ընկնիլ. Փա_փազեան Էֆէնտի կուզէր ըսել թէ մեր եթէ փոխանորդ մը չենք կրնար դատել, ո՞ր կրնայ մեր իրաւասութեան սահմանը. Ես ալ կըսեմ թէ Ազգ. Ժողովն, որ Պատրիարքն և Վար_չութիւնը դատելու իրաւասութիւնն ունի իրեն իրմէ ընտրեալ պաշտօնական մարմինները, եթէ այսօր անոնց ստորադրեալ փոխանորդին դա_տն իրեն վերապահէ, ինչո՞ւ միայն երրորդա_կան կամ չորրորդական պաշտօնի մը դատն ալ հոս չբերէ. Պատրիարքական փոխանորդը Վարչութեան Խառն ժողովէն կընտրուի. պէտք է ուրեմն անոր նկատմամբ եղած ամբաս_տանութեան խնդիրը Խառն ժողովին ղրկուի. Հոս այնպիսի անկարելի է տեսնել այնպիսի դատ մը, որ մինչև իսկ յանձնաժողով կառաջարկուի այնպիսի անդամներէ, որոնց 2ը մէկ կողմէ և 2ը միւս կողմէ և 5ը երեսփոխանութեան կողմէ կոչուած ըլլայ. շատ ծիծաղելի է այս։ Ուստի կեզրակացնեմ առաջարկելով որ Ազգային Ժո_ղովն որոշէ թէ այս դատական խնդիրն իրեն չվերաբերիր, թէ երկու կողմն ալ Վարչու_թեան Խառն ժողովոյն դիմել ազատ են, և եթէ հոն չլուծուի այն ատեն հոս դիմեն։

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Կը ձայնակցիմ Մէր_սէմ-Գուլի Էֆէնտիի առաջարկութեանը յաւել_ցնելով թէ այս խնդիրն՝ որ Վարչութեան անկ է, անոր չյանձնել՝ և ձեռքն առնել օրինա_ւոր չէ. բայց եթէ անկարողութիւն յայտնել է Վարչութեան կը վերաբերի, պէտք է անոր յանձնել, նա թող քննէ կամ ինքնին և կամ Մասնաժողովով, ինչպէս որ կուզէ. իրեն դիմա_ւոր բանն է։

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Նախապէս կուզէի պատասխանել Քաղ.՝ Ժողովոյ ատենապետին

այն առաջարկութեան՝ զոր ըրաւ ըսելով թէ Ազգային ժողովն իւր մանաժողովին ձեռօք թող քննէ այս խնդիրն, ես եթէ աղեկ կը գործադրեմ իւր վճիռն, եթէ չաղեկ չեմ գործադրեր։ Իրաւունք չունի զայդ ըսելու. Քաղ. ժողովը պարտաւոր է ըստ օրինի Ազգ. ժողովէն յանձնարարեալ որ և է որոշում մը գործադրել, հերիք է որ ժողովին օրինաւոր քուէէն անցած ըլլայ այն. ուրիշ խնդիր է թէ որ Քաղ. ժողովը պատասխանատուութեամբ մը հաս բերէ նորէն. եթէ այդ գիտակցով ըսաւ Քաղ. ժողովոյ ատենապետն, ըսելիք չունիմ։ Գալով այն առաջարկութեան թէ այս խնդիրը Վարչութեան վերաբերեալ է և պէտք է անոր յանձնել, գիտէի անշուշտ թէ Պատր. Փոխանորդին դէմ եղած այս ամբաստանութեան մէջ Ազգ. ժողովը գործ չունի և Վարչութեան Խառն ժողովին կը պատկանի քննել զայն, և յիշեցուցի թէ պէտք չէ Ազգ. Ժողովն զբաղեցնել այս խնդրով, սակայն խնդիրն այսօր այն վիճակէն ելած և ժողովրդական կամ հանրական կերպարանք մ'առած է. մինչև իսկ անցեալ նըստին՝ ուր ես ներկայ չէի, խօսք մը անխոհեմութեանց տեղի տուեր է այս խնդրոյն առթիւ. երեսփոխաններէն ոմանք զրպարտած այս ինչ կամ այն ինչ անձ կը թուրթին. բարձրաստիճան եկեղեցականներէն ոմանք սուտ և անդ կը բամբասուին. շատ հաւանական է որ բոլոր ասոնք՝ այս խնդրոյն հետևանքն եղած ըլլան։ Անոր համար առաջարկեցի որ Ազգ. Ժողովն իւր առանձնէ այս խնդրոյն քննութիւնը, և որովհետև ծանր ու երկար բարակ նայելու գործ մը է, այս պատճառաւ մասնաւոր ճիւղի մը յանձնուի կը խնդրեմ։

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. էֆ. — Մատթէոս Սրբազան ինձ նկատմամբ ըսաւ թէ Սահմանադրութիւնը պարտք կը դնէ հնազանդիլ Ազգ. ժողովոյ։ Շնորհակալ եմ որ զիս պատուած են Քաղ. ժողովոյ անդամ ընտրելով. սակայն եթէ Ն. Սրբութիւնը կկարծէ որ ես սահմանադրութիւնը նոր կարդացած, կսխալի. եթէ անոր չափ չգիտեմ սահմանադրութիւնը, անկէ շատ վար ալ չեմ։ Սահմանադրութիւնը դրած է Ազգ. ատեն զործերը և խորհրդանշխարն իրեն պատկանեալ ժողովին յանձնած. Ազգ. ժողովն՝ որ գլխաւորապէս օրէնսդրական պաշտօն ունի, երբ վարչութեան վերաբերեալ գործ մը կուզէ իրեն սեփականել, կերպով մը կը զեղծանէ սահմանադրութեան այն սկզբունքը՝ որ կը կոչանայ ազգային գործոց բաժանման մէջ. եթէ այսօր փոխանորդ Հօր և Փափազեան էֆ. ի մէջ ծագած խնդիրն իբր արտաքոյ կարգի խնդիր կուզէ իրեն սեփականել, ինչ երաշխաւորութիւն կայ որ վաղն ուրիշ անձ մը վարչութեան դիմել չուզելով եթէ հաս գայ չկլլոր ընդունուի։ Ես գոհ եմ որ ներկայ խնդրոյն մէջ երկու կողմն ալ չեն հաւաքածուկը Քաղ. ժողովոյն դիմելու և հաս կ'գիմեն, հա՛ս ուր մասնաւոր խնդրոյ տեղը չէ. եթէ այսուհետև Քաղ. ժողովոյն դատուղեն իսկ՝ ես հրաժարեալ պիտի դտնուիմ այս մասին։

Վերջապէս՝ իմ նպատակս աչ այլ ինչ է, բայց եթէ օրէնքը պաշտպանել, և այս խնդրոյն մէջ ալ կարծիքս այս է որ վարչութեան պէտք է յանձնուի, և ժողովն իւր օրուան կարգի անմիջապէս բևոր խնդրովն զբաղի, որ է Պիւտճէի խնդիրն։

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — Թէև տակաւին ատենաբաններ կան՝ որ խօսք առած են, բայց ըստ որում բաւականին ունէի երկարեցաւ այս խնդիրն, ասոր գլուխը կկարծէ թէ ալ ժամանակ է խօսից շարունակութեան թելը խզել և խնդրոյն վրայ եղած երկու առաջարկութիւնները քուէի դնել։ Խնդիրն արդէն դատական ձևին վրայ է. երկու առաջարկութիւն կայ այս մասին. Մատթէոս Սրբազանն երեսփոխանական քննիչ Մասնախումբ մը կառաջարկէ. տարբ հակառակ առաջարկութիւն մ'ալ կայ՝ որ է այս դատական խընդիրը վարչութեան յանձնել։

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. էֆ. — Երկրորդն առաջարկութիւն չէ. օրինաց պահանջումն է։

ՓԱՓԱԶԵԱՆ Մ. էֆ. — Ես փոխանորդ տէր Հօրմէն աւելի ըսի թէ առաջարկուած Մասնախումբը կընդունիմ. և ընդունելուս պատճառն ալ ըսեմ. որովհետև ամբաստանեալը Խառն ժողովոյ անդամ է, Կրօն. ժողովին անդամակցութեան



պատճառաւ. ասոր համար է որ մասնակցեցայ Մատթէոս Սրբազանի առաջարկութեան. իմ հարց չէ. Ո՞ւր կուզէք՝ դրկեցէք. եթէ կուզէք՝ Վարչութեան յանձնեցէք. երբ վարքիս կողմնակութիւն մը նշմարեմ, նորէն հոս կը բերեմ խընդիրը։

Ատենապետ էֆ. ամփոփելով երկու առաջարկութիւնները՝ քուէի դրաւ. Առաջինն՝ որ էր փոխանորդ Հօրն իբր Վարչութեան ճիւղ նկատելով իրեն դէմ եղած ամբաստանութեան դատն ազգային ժողովոյ մէջ տեսնել, քուէի դրուելով՝ 23 թէ. ունեցաւ. իսկ երկրորդն՝ որ էր իբր ըմտարրեալ պաշտօնեայ նկատելով՝ վարչութեան յղել, քուէի դրուելով՝ 21 թէ. ունեցաւ։

Հետևաբար՝ 21 քուէի դէմ 23 քուէով ընդունեցաւ փոխանորդ Հօր դատն ազգային ժողովոյ մէջ տեսնել։

Այն որոշմէն ետև, Ատենապետ էֆէնտի Սահմանադրութեան 8րդ յօդուածին արտաքոյ Փախաղյանութեանը հանեցաւ առաջարկեց Փախաղյանութեանը հանեցաւ առաջարկեց Ատենաբանն էֆէնտիի ամբաստանագիրն յղել Ատենապետ գիւանին նախագահութեանը։

Ֆէսէ Օզսէն էֆ. Սահմանադրութեան 7րդ յօդուածին վերջին պարբերութիւնը կարդալով, առաջարկեց որ նոյն պարբերութեանը համեմատ այն դատին քննութեանը ձեռք զարնուի։

Այս վերջին առաջարկութիւնը քուէի դըրուելով, մեծ քուէի հակառակ ընդունեցաւ ժողովին միաձայնութեամբ։

Մասնաժողովի ընտրութեանը գալով, Սահմանադրութեան 8րդ յօդուածին համաձայն Մայր Դիւանին յանձնուեցաւ որ սրբագրելի ցանկ մը ներկայացնէ յաջորդ նստին մէջ, ըստ օրինակի ներկայացնէ յաջորդ նստին մէջ, ըստ օրինակի Նախարևնիչ դիւանց ընտրութեան՝ Դատական Մասնաժողովը կազմուելու համար։

Այս միջոցին Ատենադպիր Աբրահամեան էֆէնտի երեսփոխանաց ոմանց կողմէ մատուցուած երկու թղթաբեր ներկայացուց, որ Փանոսեան էֆէնտիի ամբաստանութեան խնդրոյն վրայ կը վերաբերէին. ժողովն աւելորդ գտաւ զանոնք կարդալ։

Նոյնպէս Ատենադպիր էֆէնտին Գալթայի Թաղեցւոց կողմէ հասած հանրագիր մը ներկայացուց, որոյ ընթերցումն Օգսէն և Փափազեան էֆէնտիներու բողոքանաց վրայ առաջիկայ նստին թողուեցաւ։

Աւանց Օրակարգին անցնելու, ատեանը գոցուեցաւ ժամն 9 1/2ին։

ԱՏԵՆԱԴՊԻՐ
Հ. Ս. Աբրահամեան

ԱՏԵՆԱՊԵՏ
Նուրեան

35

1873

# ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Խորէն | Եպիսկ. | Մխիթարեան | Ա. ԱՏԵՆԱՊԵՏ |
| 2. | Յակոբ | Վարդ. | Փափազեան | Ա. ԱՏԵՆԱԴՊԻՐ |
| 3. | Գէորգ | Ա.գ. Բ. | Արծրունի | Բ. ԱՏԵՆԱՊԵՏ |
| 4. | Խաչատուր | » » | Տ. Գաբրիէլեան | Բ. ԱՏԵՆԱԴՊԻՐ |
| 5. | Գաբրիէլ | » » | Չիչէքճեան | |
| 6. | Յովհաննէս | » » | Մկրեան | |
| 7. | Արիստակէս | » » | Քաբակէօզիւլի | |
| 8. | Պետրոս | » » | Փափազեան | |
| 9. | Իգնատիոս | » » | Մանավեան | |
| 10. | Գրիգոր | » » | Սէթեան | |
| 11. | Աթանաս | Քհնյ | Ս. Խաչ յիւսկ | |
| 12. | Մեսրովպ | » | Երէցեան | |
| 13. | Միքայէլ | » | Պալատու | |
| 14. | Զաքարիա | » | Բերայի | |

## ԲԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Աւետիս | Էֆ. | Քօլօլեան | Ա. ԱՏԵՆԱՊԵՏ |
| 2. | Եղիա | » | Ձայեան | Բ. » |
| 3. | Մատթէոս | » | Ալիքսանեան | Ա. ԱՏԵՆԱԴՊԻՐ |
| 4. | Գէորգ | » | Քըլըճճեան | Բ. » |
| 5. | Արէլ | » | Կիւպէնկեան | |
| 6. | Գէորգ | » | Փանոսեան | |
| 7. | Ենովք | » | Տէմիրճիպաշեան | |
| 8. | Մարտիրոս | » | Միւհէնտիսեան | |
| 9. | Յակոբ | » | Ջօպանեան | |
| 10. | Յարութիւն | » | Ֆընտըքլեան | |
| 11. | Յարութիւն | » | Թիրաքեան | |
| 12. | Նիկողոս | » | Աշնանեան | |
| 13. | Ռուբէն | » | Գրիգորեան | |
| 14. | Սահեան | » | Պէյլիկճեան | |

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

*Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի. և Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկայը և Հայ գրավաճառաց քով՝*